ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ԿՈԴ՝ Պ-596-30.04.2020-ԳԿ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

ԱՌԱՋԱՐԿԻ ՀԵՂԻՆԱԿԸ	ՆԱԽԱԳԾԻ ԱՅՆ ՄԱՍԸ, ՈՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՒՄ Է ԱՌԱՋԱՐԿԸ	ԱՌԱՋԱՐԿԸ	ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԻՄՆԱԿԱՆ ԶԵԿՈՒՑՈՂԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Նախագծի 1-ին հոդվածով որպես օրենքի նպատակ՝ ի թիվս այլնի, նախատեսվում է նաև տեսալսողական տեղեկատվության տարածքի պաշտպանության ու զարգացման ապահովումը: Այս առումով պարզ չէ՝ ինչ պետք է հասկանալ «տեսալսողական տեղեկատվության տարածք» ասելով:	Ընդունվել է
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Նախագծի 1-ին հոդվածի վերնագրում «առարկան» բառից առաջ լրացնել «կարգավորման» բառը, 1-ին հոդվածի 2-րդ մասում «լիցենզավորման» բառից առաջ լրացնել «հեղինակազորման,» բառը, քանի որ Նախագծով կարգավորվում է նաև հեղինակազորման տրամադրումը, իսկ նույն մասում «ստացման» բառը փոխարինել «ներկայացման» բառով:	Ընդունվել է
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Նախագծի 1-ին հոդվածի 3-րդ մասի «գործունեության» բառից հետո լրացնել «,տեսալսողական արտադրանքին զուգահեռ կամ տեսալսողական արտադրանքի կազմում հաղորդվող կամ տեսալսողական արտադրանքի միջոցով հասանելիություն ստացող լրացուցիչ տեսալսողական կամ տեքստային	Ընդունվել է

		տեղեկատվության (ինտերակտիվ հեռուստատեսության)» բառերով:	
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Նախագծի 1-ին հոդվածի 4-րդ մասի 4-րդ կետում և 2-րդ հոդվածի 1-ին մասում «կարգավորող» բառից հետո լրացնել «պետական» բառը, քանի որ Նախագծում նշված է, որ մեդիածառայության ոլորտը կարգավորող մարմինը Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն է, որը Սահմանադրությամբ ստեղծված մարմին է, իսկ ՀՀ Սահմանադրության համաձայն Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը պետական մարմին է:	Ընդունվել է
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Նախագծի 1-ին հոդվածի 5-րդ մասում «նպատակով» բառը փոխարինել «իմաստով» բառով:	Ընդունվել է
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Նախագծում դրույթների միջև հակասությունները բացառելու նպատակով առաջարկում ենք Նախագծում օգտագործվող «լիցենզավորման» և «լիցենզիա ստանալու մրցույթ» բառերը համապատասխանեցնել և գրել միևնույն բառերը, ինչպես նաև «լիցենզավորված» և «լիցենզիա ստացած» բառերն էլ համապատասխանեցնել և գրել միևնույն բառերը, քանի որ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտում միևնույն միտքն արտահայտելիս կիրառվում են միևնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները՝ որոշակի հերթականությամբ:	Ընդունվել է
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Համաձայն Նախագծի 23-րդ հոդվածի 1-ին մասի Խորհուրդը՝ հանրային տեսալսողական	

		մեդիածառայությունների (օրենքում նաև՝ Հանրային հեռարձակող) գործունեության նկատմամբ կառավարումն ապահովող և հսկողություն իրականացնող մարմինն է, հետևաբար Նախագծի 1-ին հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետը հարկավոր է համապատասխանեցնել և «գործունեությունը վերահսկող» բառերի փոխարեն գրել «գործունեության նկատմամբ կառավարումն ապահովող և հսկողություն իրականացնող» բառերը:	Ընդունվել է
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Նախագծի 2-րդ հոդվածի վերնագրում և 1-ին մասում «տեսալսողական» բառից հետո «տեղեկատվության» բառը փոխարինել «մեդիայի» բառով, քանի որ հենց 2-րդ հոդվածի 1-ին մասում նշված է տեսալսողական մեդիայի մասին օրենսդրություն, իսկ Նախագծի վերնագիրն է «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք և այն կարգավորում է տեսալսողական մեդիայի ոլորտը:	Ընդունվել է
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի գ) ենթակետում «պետական» բառից առաջ լրացնել «անկախ» բառը, քանի որ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը Սահմանադրությամբ ստեղծված մարմին է, իսկ ՀՀ Սահմանադրության 196-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը անկախ պետական մարմին է:	Ընդունվել է
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի դրույթներին համապատասխանեցնելու և Նախագծի ընդունումից հետո տարաբնույթ ընկալումը բացառելու նպատակով առաջարկում ենք Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի ե) ենթակետում և 32-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերում «նորմատիվ» բառից առաջ լրացնել «ենթաօրենսդրական» բառը, քանի որ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում տրված է	Ընդունվել է

		ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի սահմանումը և որը ընդունում են Սահմանադրությամբ նախատեսված մարմինները:	
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետից հանել «օգտատերերին» և «բայց ոչ տեսալսողական արտադրանքի բովանդակության» բառերը, տեսալսողական տեղեկատվության տարածողի հասկացություն ավելի ճշգրիտ սահմանելու համար:	Ընդունվել է
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Նախագծի 3-րդ հոդվածում տրված հասկացությունների վերաբերյալ հայտնում ենք, որ «տեսալսողական մեդիածառայություն», «տեսալսողական տեղեկատվություն», «տեսալսողական ծրագիր» և «տեսալսողական հաղորդում» հասկացությունների սահմանումները տարաբնույթ ընկալման տեղիք են տալիս, իսկ «տեսալսողական մեդիածառայություն» հասկացությունը Նախագծի իմաստով չի հասկացվում և նման է մեդիածառայության մատակարարի հասկացությանը, հետևաբար առաջարկում ենք վերանայել «տեսալսողական մեդիածառայություն», «տեսալսողական տեղեկատվություն», «տեսալսողական ծրագիր» և «տեսալսողական հաղորդում» հասկացությունների սահմանումները տարաբնույթ ընկալումը բացառելու համար, ինչպես նաև սահմանել «հեռարձակում», «վերահեռարձակում», «տեսալսողական արտադրանք» և «ծրագրային փաթեթ» հասկացությունները:	Ընդունվել է
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում «շահագործումը» բառից հետո լրացնել «և օգտագործում է հաճախականային սահմանափակ ռեսուրսը:» բառերով:	Ընդունվել է
ՀՀ	Նախագիծ	Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում	

Կառավարություն		հանրային տեսալսողական մեդիածառայությունը բնորոշվում է որպես Հայաստանի Հանրապետության կամ Հայաստանի Հանրապետությանը 100 տոկոս պատկանող ընկերության սեփականությունը հանդիսացող կազմակերպություն, որի գծային տեսալսողական տեղեկատվությունները նախատեսված են Հայաստանի Հանրապետության բնակչության համար և *կարող են ընդունվել Հայաստանի Հանրապետության բնակչության առնվազն երկու երրորդի կողմից*: Այս առումով պարզ չէ՝ ինչպես է որոշվելու ՀՀ բնակչության առնվազն երկու երրորդի կողմից տեսալսողական տեղեկատվությունն ընդունվելու փաստը:	Ընդունվել է
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետում «ժանրային» բառից առաջ լրացնել «կարգավորող պետական մարմնի կողմից սահմանված» բառերը:	Ընդունվել է
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետում տրված է «տեսալսողական մեդիածառայությունների դիստրիբյուտոր»-ի սահմանումը, սակայն Նախագծի 50-րդ հոդվածի 1-ին մասում, 56-րդ հոդվածում, 59-րդ հոդվածի 19-րդ մասում օգտագործվում է «տեսալսողական տեղեկատվության դիստրիբյուտոր» տերմինը, առաջարկում ենք համապատասխանեցնել սահմանման հետ:	Ընդունվել է
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Նախագծի 3-րդ հոդվածի 15-րդ մասում «նյութ» բառից հետո լրացնել «,ներառյալ տեսալսողական արտադրանքին զուգահեռ կամ տեսալսողական արտադրանքի կազմում հաղորդվող կամ տեսալսողական արտադրանքին միջոցով հասանելիություն ստացող լրացուցիչ տեսալսողական կամ տեքստային տեղեկատվությունը (ինտերակտիվ հեռուստատեսություն)» բառերով:	Ընդունվել է

ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի համաձայն՝ լիցենզիան կարգավորող պետական մարմնի կողմից տեսալսողական մեդիածառայությանը տրամադրվող փաստաթուղթ է, որը տալիս է հանրային մուլտիպլեքսում որոշակի տեսալսողական մեդիածառայության տեղեկատվության հեռարձակման նպատակով սլոթի օգտագործման իրավունք կամ ֆիզիկական կամ իրավաբանական անձին տեսալսողական տեղեկատվությունը տարածելու իրավունք: Այս առումով պարզաբանման կարիք ունի «տեսալսողական տեղակատվության տարածում» ձևակերպումը, քանի որ պարզ չէ՝ տեսալսողական տեղեկատվության տարածման որ եղանակներն են օրենքի իմաստով համարվում լիզենզավորման ենթակա՝ նկատի ունենալով այն, որ գործող օրենքի իմաստով լիցենզավորման ենթակա գործունեություն է համարվում միայն հեռուստառադիոծրագրերի հեռարձակումն ու վերահեռարձակումը:	Ընդունվել է
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետում «հանրային» բառից հետո ավելացնել նաև «մասնավոր» բառը, քանի որ մասնավոր մուլտիպլեքսի 20 տոկոսը նույնպես տրամադրվում է կարգավորող պետական մարմնի կողմից լիցենզավորված տեսալսողական մեդիածառայություններին:	Ընդունվել է
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետում պարզ չէ՝ ինչ իրադարձությունների մասին է խոսքը, բացի այդ խմբագրման կարիք ունի նույն կետում օգտագործվող «իրադարձության սեփականատեր» ձևակերպումը:	Ընդունվել է
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Թեև Նախագծով որպես հիմնական հասկացություն՝ տեսալսողական տեղակատվության	Ընդունվել է

		հասկացությունից բացի սահմանված է նաև տեսալսողական հաղորդման հասկացությունը, այն է՝ տարածվող պատկերներ և (կամ) հնչյուններ և (կամ) այլ տեղեկատվություն պարունակող կենդանի կատարման կամ ամրագրված սահմանափակ տևողությամբ նյութ, որը բովանդակային և կազմակերպական իմաստով ինքնուրույն և ավարտուն է, համարվում է հեղինակային և (կամ) հարակից իրավունքի օբյեկտ, այնուամենայնիվ, Նախագծի մի շարք դրույթներում (օրինակ՝ 3-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետ, 53-րդ հոդված և այլն) «տեսալսողական հաղորդումներ» եզրույթի փոխարեն օգտագործվում է «տեսալսողական տեղեկատվություններ» եզրույթը, ինչն արդարադացված չէ նախևառաջ այն պատճառով, որ տեղեկատվությունը չափելի կատեգորիա չէ, հետևաբար այն չի կարող ունենալ կոնկրետ քանակ կամ թիվ, ինչպես օրինակ՝ դա նախատեսվում է Նախագծի 27-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում: Բացի այդ, նշված մոտեցումն առաջացնում է նշված երկու հասկացությունների շփոթ, քանի որ պարզ չէ՝ Նախագծի իմաստով որն է տեսալսողական տեղեկատվության և տեսալսողական հաղորդման տարբերությունը:	
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Նախագծով կարգավորվող դրույթների համապատասխանությունը ապահովելու նպատակով առաջարկում ենք Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետում և 32-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետում «մեդիածառայությունների» բառից հետո լրացնել «և տեսալսողական տեղեկատվություն տարածողների գործունեությունը» բառերը, քանի որ Նախագծի 42-րդ հոդվածը կարգավորում է և տեսալսողական մեդիածառայությունների և տեսալսողական տեղեկատվություն տարածողների գործունեության մշտադիտարկման իրականացման կարգը:	Ընդունվել է
ՀՀ	Նախագիծ	Նախագծի 6-րդ հոդվածի 2-րդ մասում առաջարկում	Ընդունվել է

Կառավարություն		ենք «Այլ» բառը փոխարինել «Օտար» բառով:	
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Նախագծի 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ լիցենզիա ստացած տեսալսողական մեդիածառայության երաժշտական բնույթի հաղորդումները պետք է պարունակեն առնվազն 30 տոկոս հայերեն երաժշտական ստեղծագործություններ: Կարծում ենք՝ նման կարգավորումն էականորեն սահմանափակում է տեսալսողական մեդիածառայությունների կողմից մատուցվող տեղեկատվության բովանդակության ազատ ընտրության իրավունքը: Նախագծի 6-րդ հոդվածի 4-րդ մասի վերաբերյալ հայտնում ենք, որ նշված նորմը մեկնաբանելիս՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից հասկացվում է, որ ժամը 23:00-ից մինչեւ 07:00-ն ընկած ժամանակահատվածում հայերեն երաժշտական ստեղծագործությունները չեն կարող հեռարձակվել, և օրենքն ուժի մեջ մտնելու դեպքում այս նորմի իմաստից ելնելով նշված ժամանակահատվածում հայերեն երաժշտական ստեղծագործությունների հեռարձակումը կարգելվեն:	Ընդունվել է
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Նախագծի 6-րդ հոդվածի 7-րդ մասը առաջարկվում է շարադրել հետևյալ խմբագրությամբ. «7. Տեսալսողական մեդիածառայությունները պարտավոր են իրենց ծրագրերում ապահովել լսողության խնդիրներ ունեցող անձանց համար հնարավոր տեղեկությունների ստացման մատչելիությունը՝ հայերեն ժեստերի լեզվով թարգմանությամբ և (կամ) հայերեն բաց կամ փակ ենթագրերով (համաժամանակյա գրավոր նկարագրությամբ) հեռարձակման միջոցով: Լսողության խնդիրներ ունեցող անձանց տեղեկություն ստանալու մատչելիությունն ապահովելու համար օրվա հեռուստաեթերաժամում հեռարձակվող	Ընդունվել է

		հեռուստահաղորդումների նվազագույն քանակները և պահանջները սահմանվում են օրենքով:»:	
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Նախագծի 7-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետում «հաղորդումների» բառից առաջ լրացնել «տեսալսողական» բառը:	Ընդունվել է
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Նախագծի 7-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ տեսալսողական մեդիածառայություններն ապահովում են ստուգված փաստի կամ իրադարձության մասին անկողմնակալ տեղեկացումը: Հարկ է նկատի ունենալ, որ նշված դրույթի բովանդակությունը չի համապատասխանում իրավական որոշակիության սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, ինչը թույլ կտա իրավունքի սուբյեկտներին դրանց հետ համատեղելու իրենց վարքագիծը (ՀՀ Սահմանադրական դատարանի ՍԴՈ-630 որոշում): Մասնավորապես, անհրաժեշտ է նախ սահմանել «ստուգված փաստ կամ իրադարձություն» եզրույթի հասկացությունը կամ հստակեցնել, թե ի՞նչ մեխանիզմներով և ու՞մ կողմից է գնահատվելու փաստի կամ իրադարձության ստուգված լինելու հանգամանքը: Բացի այդ, անհասկանալի է նաև «անկողմնակալ» եզրույթը, քանի որ վերջինս տարաբնույթ մեկնաբանությունների առիթ կարող է հանդիսանալ: Նույն դիտարկումը վերաբերում է նաև քննարկվող հոդվածի 1-ին մասի 6-րդ կետին, որի համաձայն, տեսալսողական մեդիածառայություններն ապահովում են իրազեկումը՝ գաղտնի կամ հավաստիությունը բավականաչափ չստուգված աղբյուրների կողմից տրամադրված տեղեկատվության վերաբերյալ: Այս առումով առաջարկում ենք Նախագծում նախատեսել	Ընդունվել է

		գաղտնի կամ հավաստիությունը բավականաչափ չստուգված աղբյուրների կողմից տրամադրված տեղեկատվության ստուգման, դրանց օգտագործման և տարածման հետ կապված համապատասխան իրավակարգավորումներ:	
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Նախագծի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի համաձայն՝ լրատվական հաղորդումներում տեսալսողական մեդիածառայություններն ապահովում են իրավասու պաշտոնյաների կարծիքների լուսաբանումն աղետների հնարավոր վարկածները լուսաբանելիս: Առաջարկում ենք խմբագրել նշված կետը՝ նկատի ունենալով, որ պաշտոնատար անձիք կարող են վարկածներ ներկայացնել ոչ միայն աղետների այլև այլ հարցերի վերաբերյալ, որոնք կարող են տեսալսողական մեդիածառայությունների կողմից լուսաբանվել լրատվական հաղորդումներում: Միաժամանակ, նշված կետի կարագավորումից բխում է, որ տեսալսողական մեդիածառայություններին արգելվում է իրավասու պաշտոնատար անձանցից բացի աղետների հնարավոր վարկածների վերաբերյալ ցանկացած այլ անձի կարծիքի ներկայացումը, ինչը կարծում ենք՝ համահունչ չէ կարծիքի արտահայտման ազատության սահմանադրական իրավունքի էությանը, որը ենթադրում է յուրաքանչյուր անձի՝ սեփական կարծիք ունենալու, ինչպես նաև առանց պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջամտության և անկախ պետական սահմաններից՝ *տեղեկատվության որևէ միջոցով տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատություն:*	Ընդունվել է
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Նախագծի 7-րդ հոդվածի 3-րդ մասի 6-րդ կետի համաձայն՝ տեսալսողական հաղորդումներում հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցերը, ինչպես նաև քաղաքական, տնտեսական, հասարակական կամ մշակութային խնդիրները	Ընդունվել է

		լուսաբանելիս **հաղորդավարները պետք է հայտնեն հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցերի շուրջ իրենց տեսակետը հայտնող անձանց քաղաքական պատկանելությունը:** Այս կապակցությամբ գտնում ենք, որ տեսալսողական հաղորդումներում հանրային հետքրքրություն ներկայացնող ցանկացած հարցի, ոչ միայն քաղաքական, այլ մշակութային, տնտեսական կամ որևէ այլ խնդիրի վերաբերյալ իր տեսակետն արտահայտող անձանց քաղաքական պատկանելությունը շեշտադրելը պարունակում է ոչ քաղաքական բնույթի հաղորդումների անհարկի քաղաքականացման վտանգ, բացի այդ կարծում ենք՝ նման կարգավորումը խնդրահարույց է նաև անձի քաղաքական պատկանելությամբ պայմանավորված՝ վերջինիս կարծիքի արտահայտման ազատության իրավունքի իրացման նկատմամբ անուղղակի ներգործության տեսանկյունից:	
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Նախագծի 7-րդ հոդվածի՝ 1) 2-րդ մասում լրացնել 7-րդ կետ՝ հետևյալ բովանդակությամբ. «7) օրենքով սահմանված կարգով պահպանվող պետական գաղտնիք հանդիսացող տեղեկությունների տարածման բացառումը:», 2) 3-րդ մասում լրացնել 8-րդ կետ՝ հետևյալ բովանդակությամբ. «8) պետք է չբացահայտվեն օրենքով սահմանված կարգով պահպանվող պետական գաղտնիք հանդիսացող տեղեկություններ:»,	Ընդունվել է
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Նախագծի 8-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրվում է կարևոր իրադարձությունների մասին տեղեկատվություն ստանալու իրավունքը, իսկ նույն հոդվածի 3-րդ մասով սահմանվում է, որ դրանց շրջանակը հաստատում է կարգավորող պետական	Ընդունվել է

		մարմինը: Կարծում ենք՝ նման կարգավորումն արդարացված չէ, քանի որ կարևոր իրադարձությունների շրջանակը սուբյեկտիվ և փոփոխական է: Եթե անգամ խոսքն այս դեպքում հասարակական նշանակություն ունեցող կարևոր իրադարձությունների մասին է, այնուամենայնիվ, գտնում ենք, որ դրանց շրջանակը սահմանել հնարավոր չէ, քանի որ ցանկացած անկանխատեսելի իրադարձություն որոշակի պայմաններում և որոշակի ժամանակահատվածում հանրության համար կարող է ունենալ կարևոր նշանակություն: Միաժամանակ, հաշվի առնելով օգտատերերի կողմից դիտումն ապահովելու հարցում սուբյեկտիվ գործոնի որոշիչ նշանակությունը՝ անհասկանալի է, թե մեդիածառայությունն ինչպես է ապահովելու օգտատերերի զգալի մասի կողմից ուղիղ եթերով կամ վերահեռարձակման ժամանակ դիտումն ապահովելու պահանջը: Պարզ չէ նաև, թե ինչպես է որոշվելու օգտատերերի զգալի մասի շրջանակը:	
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Նախագծի 8-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետում «տարբերանշանը» բառը փոխարինել «ելքային տվյալները,» բառերով, քանի որ այս Նախագծի դրույթների իմաստով «տարբերանշան» բառը չի կիրառվում, իսկ Նախագծի 20-րդ հոդվածով սահմանվում են տեսալսողական մեդիածառայությունների ելքային տվյալներին վերաբերող դրույթներ, հետևաբար տարաբնույթ ընկալումը բացառելու համար առաջարկում ենք այս փոփոխությունը:	Ընդունվել է
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Նախագծի 9-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը «քարոզող» բառից հետո լրացնել «, ինչպես նաև խաղամոլությանն առնչվող» բառերով:	Ընդունվել է

ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Նախագծի 9-րդ հոդվածի 3-րդ մասում «ծառայությունների» բառը փոխարինել «մեդիածառայությունների» բառով:	Ընդունվել է
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Նախագծի 9-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ արգելվում են տեսալսողական հաղորդումները, որոնց մասնակիցները կենցաղային հողի վրա առաջացած վիճաբանության, երկարատև ժամանակահատվածի ընթացքում ձևավորված հակակրանքի արդյունքում հաղորդման բնույթով պայմանավորված կարող են կատարել մարդու առողջության կամ հասարակական կարգի և բարոյականության դեմ ուղղված հանցագործություն: Նման ձևակերպումը խնդրահարույց է, քանի որ անձի կողմից կենցաղային հողի վրա առաջացած վիճաբանության կամ երկարատև ժամանակահատվածի ընթացքում ձևավորված հակակրանքի հիման վրա հաղորդման ընթացքում մարդու առողջության կամ հասարակական կարգի և բարոյականության դեմ ուղղված հանցագործություն կատարելու հնարավորությունը տեսալսողական մեդիածառայությունը որևէ կերպ կանխատեսել չի կարող:	Չի ընդունվել
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Նախագծի 10-րդ հոդվածի 6-րդ մասը լրացնել նոր նախադասությամբ հետևյալ բովանդակությամբ. «Սույն հոդվածի 6-րդ մասի պահանջը չի տարածվում լսողական մեդիածառայության վրա:»	Ընդունվել է
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Նախագծի 10-րդ հոդվածի 6-րդ մասում «և մշակութային» բառերը փոխարինել «մշակութային և սպորտային բառերով, իսկ «ընդհանուրն առնվազն 20 տոկոս» բառերը փոխարինել «ընդհանուր ծրագրի առնվազն 30	Ընդունվել է

		տոկոսը» բառերով:	
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Նախագծի 13-րդ հոդվածի 2-րդ մասում «էլեկտրոնային կամ թղթային կրիչով:» բառերը փոխարինել «թղթային կամ էլեկտրոնային կրիչով:» բառերով:	Ընդունվել է
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Նախագծի 11-րդ հոդվածի վերնագրում և Նախագծի ողջ տեքստում «հանրաքվեի նախապատրաստական» բառերն առաջարկվում է փոխարինել «հանրաքվեի դրված հարցի վերաբեյալ» բառերով, իսկ 11-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում և 59-րդ հոդվածի 10-րդ մասում («հանրաքվեի քարոզչությանը մասնակցող կողմերի») բառերն առաջարկվում է փոխարինել («հանրաքվեի քարոզչության կողմերի») բառերով՝ համապատասխանեցնելով նշված ձևակերպումները «Հանրաքվեի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի:	Ընդունվել է
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Նախագծի 11-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետն աառաջարկվում է «տրամադրումը» բառից հետո լրացնել «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքով սահմանված կարգի պահպանմամբ»:	Ընդունվել է
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Նախագծի 12-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տեսալսողական մեդիածառայությունները պարտավոր են ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ վարչապետին կամ վարչապետի լիազորած՝ Կառավարության այլ անդամին հատկացնել եթերաժամանակ՝ պաշտոնական հայտարարություններ կատարելու համար: «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2020 թվականի ապրիլի 29-ի	Ընդունվել է

		ՀՕ-238-Ն օրենքով (այսուհետ՝ Օրենք) փոփոխվել են արտակարգ դրության տարածքում պետական կառավարման առանձնահատկությունները: Մասնավորապես, Օրենքի 3-րդ հոդվածով «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» օրենքի 8-րդ հոդվածը շարադրվել է նոր բովանդակությամբ, որի 1-ին մասի համաձայն՝ արտակարգ դրություն հայտարարելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ կարող է սահմանվել, որ վարչապետը կամ այդ որոշմամբ սահմանված փոխվարչապետը արտակարգ դրության ընթացքում ի պաշտոնե հանդես է գալիս որպես արտակարգ դրության տարածքի պարետ: Վերոգրյալից ելնելով՝ առաջարկում ենք Նախագծի 12-րդ հոդվածի 1-ին մասի՝ «վարչապետի լիազորած՝ Կառավարության այլ անդամին» բառերը վերանայել՝ Օրենքի 3-րդ հոդվածի կարգավորումները հաշվի առնելով:	
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Նախագծի 12-րդ հոդվածը լրացնել 3-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ. «3. Ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ տեսալսողական մեդիածառայությունների իրականացման սահմանափակումները կիրառվում են «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» և «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» օրենքներով սահմանված շրջանակներում:»:	Ընդունվել է
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Նախագծի 14-րդ հոդվածի վերնագրում «լիցենզավորված» բառից առաջ լրացնել «հանրային հեռարձակողի և» բառերով:	Ընդունվել է
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Նախագծի 14-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հովանավորվող տեսալսողական հաղորդման մեջ պետք է հստակ նշվի հովանավորին համապատասխանող անվանումը կամ ցանկացած	Ընդունվել է

		այլ խորհրդանիշ, ինչպես նաև նշվի իր ապրանքը կամ ծառայությունը տարբերանշանով, որոնք կարող են ներկայացվել հաղորդման ընթացքում, սակայն ոչ ավել, քան երեք անգամ՝ յուրաքանչյուրը 15 վայրկյան տևողությամբ՝ **նպատակ ունենալով օգտատերերին տեղեկացնել հովանավորական աջակցության մասին համաձայնագրի առկայության վերաբերյալ:** Գտնում ենք, որ հովանավորական աջակցության մասին համաձայնագրի առկայության վերաբերյալ օգտատերերին տեղեկացնելու նպատակն անհասկանալի է՝ հաշվի առնելով այն, որ հովանավորության նպատակը հովանավորող անձի անունը, ապրանքանիշը, համբավը կամ գործունեությունը գովազդելն է, այլ ոչ թե հովանավորական աջակցության մասին համաձայնագրի առկայության մասին հանրությանը տեղեկացնելը:	
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Նախագծի 17-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերում «մեդիածառայությունների» բառից հետո լրացնել «և տեսալսողական տեղեկատվություն տարածողների» բառերով, քանի որ հոդվածի վերնագրում նշված է, որ ինքնուրույնության երաշխիքը վերաբերվում է նաև տեսալսողական տեղեկատվություն տարածողներին:	Ընդունվել է
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Նախագծի 19-րդ հոդվածի 1-ին մասը ներկայացնել մեկ պարբերությամբ:	Չի ընդունվել
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Նախագծի 20-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետում «հաղորդման.» բառից հետո լրացնել «ժամանակ.» բառը:	Ընդունվել է
ՀՀ	Նախագիծ	Նախագծի 22-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետում,	

Կառավարություն		46-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետում, 47-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում «հայրենական» բառը փոխարինել «հայերեն» բառով, իսկ Նախագծի 22-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերում «հեռուստահաղորդումների» բառը փոխարինել «տեսալսողական հաղորդումների» բառերով, այս փոփոխությունները առաջարկում եմ, քանի որ Նախագծում «հայրենական» և «հեռուստահաղորդումներ» հասկացությունները չեն օգտագործվում:	Ընդունվել է
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Նախագծի 22-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի «գ» ենթակետը «իրավագիտակցության,» բառից հետո լրացնել «մեդիագրագիտության և» բառերով:	Ընդունվել է
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Նախագծի 23-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է, որ Հանրային հեռարձակողի խորհուրդը հանրային հեռարձակողի կառավարումն ապահովող և հսկողություն իրականացնող մարմին է: Այս կապակցությամբ գտնում ենք, որ որևէ մարմնի կառավարումն ապահովող և նույն մարմնի նկատմամբ հսկողություն իրականացնող սուբյեկտները չեն կարող նույնը լինել:	Ընդունվել է
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Նախագծի 24-րդ հոդվածի 6-րդ և 25-րդ հոդվածի 20-րդ մասերը «ընդունվում են» բառերից հետո լրացնել «նիստին մասնակցող» բառերով:	Ընդունվել է
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Նախագծի 25-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսվում է, որ հանրային հեռարձակողի խորհրդի անդամի թափուր տեղի համալրման մրցույթն անցկացնելու նպատակով ձևավորվող մրցութային հանձնաժողովի ընթացիկ գործունեությունը սապսարկում է կառավարության աշխատակազմը: Նախևառաջ, «կառավարության	Ընդունվել է

		աշխատակազմ» եզրույթն անհրաժեշտ է փոխարինել «վարչապետի աշխատակազմ» եզրույթով: Բացի այդ պարզ չէ՝ ինչու պետք է տվյալ մրցութային հանձնաժողովի գործունեության ընթացիկ սպասարկումն ապահովվի վարչապետի աշխատակազմի կողմից՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ ոլորտում լիազոր մարմինը Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն է, որն, իր հերթին, անկախ պետական մարմին է:	
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Նախագծի 25-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ մրցութային հանձնաժողովի անդամները գործում են հասարակական հիմունքներով: Մրցութային հանձնաժողովի անդամները ստանում են փոխհատուցում որպես մրցութային հանձնաժողովի անդամ կատարած ծախսերի համար: Փոխհատուցման չափը և կարգը սահմանում է վարչապետը:	Ընդունվել է
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Հետագա տարաբնույթ մեկնաբանություններից խուսափելու նպատակով առաջարկում ենք վերը նշված մասում հստակեցնել, թե խոսքը ինչ փոխհատուցման և ծախսերի մասին է՝ նկատի ունենալով, որ մրցութային հանձնաժողովի անդամները գործելու են հասարակական հիմունքներով:	Ընդունվել է
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Նախագծի 26-րդ հոդվածում Նախագծի ուժի մեջ մտնելու ժամկետը նախատեսված է որպես անցումային դրույթ, մինչդեռ, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի ուժի մեջ մտնելու ժամկետները պետք է սահմանվեն որպես եզրափակիչ դրույթ:	Ընդունվել է
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Նախագծի 26-րդ հոդվածը լրացնել 1-ին մասով՝ հետևյալ խմբագրությամբ. «1. Խորհրդի նախագահի ընտրությունը» և նույն հոդվածի 1-ից 5-րդ մասերը թվագրել որպես 1-ին մասի	Ընդունվել է

		կետեր՝ 1), 2), 3), 4) և 5), իսկ 6-րդ և 7-րդ մասերը թվագրել որպես համապատասխանաբար 2-րդ և 3-րդ մասեր:	
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Նախագծի 27-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում «տեղեկատվության» բառը փոխարինել «ծրագրերի» բառով, իսկ «տեղեկատվություն» բառը փոխարինել «ծրագիր» բառով, իսկ Նախագծի 27-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետում «տեղեկատվական» բառից առաջ լրացնել «հանրային հեռարձակողի կողմից» բառերով:	Ընդունվել է
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Նախագծի 27-րդ հոդվածի՝ 1) 1-ին մասի 6-րդ կետը «տնօրեններին» բառից հետո լրացնել «՝նիստին մասնակցող Խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:» բառերով և նոր նախադասությամբ՝ հետևյալ խմբագրությամբ. «Գործադիր տնօրենները նշանակվում են մինչև 5 տարի ժամկետով:», 2) 1-ին մասի 7-րդ կետը «տեղակալներին» բառից հետո լրացնել «՝ նիստին մասնակցող Խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ» բառերով, 3) 1-ին մասը լրացնել 17-րդ կետով՝ հետևյալ խմբագրությամբ. «17) գործադիր տնօրենների և նրանց տեղակալների նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր:»:	Ընդունվել է
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	1. Նախագծի 28-րդ հոդվածի՝ 1) 1-ին մասից հանել 3-րդ կետը, քանի որ այն ըստ բովանդակության ներառված է նույն հոդվածի նույն	Ընդունվել է

		մասի 11-րդ կետում, 2) 1-ին մասի 11-րդ կետում «աշխատողներին,» բառը փոխարինել «աշխատողներին՝ բացառությամբ գործադիր տնօրենների տեղակալներին,» բառերով, 3)2-րդ և 4-րդ մասերը հանել, քանի որ դրանք ներառված են 27-րդ հոդվածի համապատասխանաբար 6-րդ և 7-րդ մասերում:	
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Նախագծի 30-րդ հոդվածի 2-րդ մասում «Տեսալսողական մեդիածառայությունների» բառերը փոխարինել «Հանրային հեռարձակողների» բառերով, քանի որ այս հոդվածում խոսքը գնում է հանրային հեռարձակողների գործունեության վերաբերյալ հաղորդմանը:	Ընդունվել է
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Նախագծի 32-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում առաջարկում ենք «անցկացման կարգը» բառերից հետո լրացնել «և մրցույթի մասնակցության հայտի ձևը» բառերը, իսկ «ստանալու կարգը» բառերից հետո լրացնել «և լիցենզիա ստանալու դիմումի ձևը» բառերը:	Ընդունվել է
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Նախագծի 32-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի վերաբերյալ հայտնում եմ, որ տեխնիկական միջոցների գործող ստանդարտներ սահմանված չեն ևՀեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը չի տիրապետում այդ ստանդարտներին և իր վերահսկողական լիազորությունները այս կետի մասով իրականացնելիս չի կարող որոշել տեխնիկակ*ան* միջոցների համապատասխանությունը գործող ստանդարտներին:	Ընդունվել է
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Նախագծի 32-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետում «ձևավորում է իր աշխատակազմը.» բառերը փոխարինել «հաստատում է իր կառուցվածքը» բառերով:	Ընդունվել է

ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Նախագծի 32-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ կագավորող պետական մարմինը ցանցային օպերատորին տալիս է լիցենզիա, իսկ նույն հոդվածի 1-ին մասի 3-րդ և 5-րդ կետերով նախատեսվում է, որ կագավորող պետական մարմինն իրականացնում է տեսալսողական մեդիածառայությունների լիցենզիա ստանալու մրցույթը և մասնավոր մուլտիպլեքս օպերատորի լիցենզիա ստանալու մրցույթը: Նախագծի 52-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ տեսալսողական մեդիածառայությունների լիցենզիաները տրվում են յոթ տարի ժամկետով, ցանցային օպերատորների լիցենզիան՝ տասը տարի ժամկետով, իսկ մուլտիպլեքս օպերատորի լիցենզիան՝ անժամկետ: Հաշվի առնելով վերոգրյալը և այն հանգամանքը, որ ցանցային օպերատորին, մուլտիպլեքս օպերատորին և տեսալսողական մեդիածառայություններին տրամադրվող լիցենզիաները տարբեր լիցենզիաներ են, իսկ պետական մարմինը լիցենզիա տրամադրում է ոչ միայն ցանցային օպերատորին, այլ նաև տեսալսողական մեդիածառայություններին և մուլտիպլեքս օպերատորին՝ առաջարկում ենք Նախագծի 32-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը խմբագրել՝ նախատեսելով, որ պետական մարմինը լիցենզիա տրամադրում է ցանցային օպերատորին, տեսալսողական մեդիածառայություններին և մուլտիպլեքս օպերատորին:	Ընդունվել է
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Նախագծի 32-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված է, որ Կարգավորող պետական մարմինն ընդունում է սույն օրենքից բխող նորմատիվ իրավական ակտեր, սակայն այս կետի հետ կապված նշենք, որ ՀՀ Սահմանադրության 196-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ Օրենքով սահմանված դեպքերում և կարգով Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն ընդունում է ենթաօրենսդրական	Ընդունվել է

		նորմատիվ իրավական ակտեր, իսկ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում տրված է ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի սահմանումը, այն է՝ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտ՝ Սահմանադրության և օրենքների հիման վրա և դրանց իրականացումն ապահովելու նպատակով օրենքով լիազորված լինելու դեպքում Սահմանադրությամբ նախատեսված մարմինների ընդունած նորմատիվ իրավական ակտ: Հետևաբար, հիմք ընդունելով վերոնշյալ դրույթները, առաջարկում եմ Նախագծի 32-րդ հոդվածում լրացնել նոր կետ, որով կսահմանվեն, թե որ դեպքերում է Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը օրենքով լիազորված ընդունելու ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր:	
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Նախագծի 32-րդ հոդվածի 1-ին կետը լրացնել նոր 26-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ. «26) սահմանում է սլոթի օգտագործման պայմանները և պարբերաբար հրապարակում է ազատ սլոթների առկայության վերաբերյալ տեղեկատվությունը:»	Ընդունվել է
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Նախագծի 34-րդ հոդվածի 3-րդ մասի երրորդ նախադասության համաձայն՝ «Կարգավորող պետական մարմնի անդամները ընտրություններին և հանրաքվեներին մասնակցում են միայն որպես ընտրող:»: Նշված դրույթով, ըստ էության, սահմանափակվում է կարգավորող պետական մարմնի անդամների մասնակցությունը ընտրություններին և հանրաքվեներին որպես թեկնածու, քարոզչության կողմ, դիտորդ, վստահված անձ, զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցիչ, լիազոր ներկայացուցիչ, ընտրական հանձնաժողովի անդամ: Միաժամանակ, «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Ընտրական օրենսգիրք) և	Ընդունվել է

		«Հանրաքվեի մասին» սահմանադրական օրենքի առանձին հոդվածներով տրված են սահմանափակումների սպառիչ ցանկեր, ովքեր չեն կարող, օրինակ, առաջադրվել որպես թեկնածու, լինել վստահված անձ, ընտրական հանձնաժողովի անդամ և այլն, և այդ սահմանափակումների ցանկում Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամները բացակայում են, ինչը կարող է հանգեցնել տարբեր օրենքների միջև հակասությունների:	
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Նախագծի 38-րդ հոդվածի 3-րդ մասում առաջարկում ենք «հիմնավորումը:» բառից հետո լրացնել «և այդ հիմնավորման հետ կապված կարգավորող պետական մարմնի առարկությունները հիմնավորման վերաբերյալ:» բառերը:	Ընդունվել է
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Նախագծի 42-րդ հոդվածի կարգավումը վերաբերվում է և տեսալսողական մեդիածառայությունների և տեսալսողական տեղեկատվություն տարածողների գործունեության մշտադիտարկման իրականացմանը և հետեւաբար առաջարկում ենք Նախագծի 42-րդ հոդվածի դրույթները համապատասխանեցնել Նախագծի 42-րդ հոդվածի վերնագրին:	Ընդունվել է
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Նախագծի 43-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն կարգավորող պետական մարմինը հայտը մերժում է, եթե ……ներկայացված փաստաթղթերը թերի, ակնհայտ կեղծ կամ խեղաթյուրված են կամ չեն համապատասխանում օրենքի և իրավական այլ ակտերի պահանջներին և հայտ ներկայացնողը չի վերացրել կարգավորող պետական մարմնի նշած թերությունները: Մինչդեռ ներկայացված փաստաթղթերում առկա թերությունների վերացման և հայտի կրկին ներկայացման ընթացակարգը Նախագծով սահմանված չէ:	Ընդունվել է

ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Նախագծի 43-րդ հոդվածը լրացնել նոր 5-րդ մասով հետևյալ բովանդակությամբ. «5. Յուրաքանչյուր նոր տեսալսողական ծրագրի համար նոր հայտ է ներկայացվում:» Նախագծի 43-րդ հոդվածի 3-րդ մասում թվարկված են հեղինակավորման համար անհրաժեշտ փաստաթղթերը, որոնց կարիքը չկա, որովհետև ստանալով հեղիանակավորման փաստաթուղթը, գործունեություն իրականացնելու համար պետք է մասնակցեն կամ մրցույթին կամ դիմում տան ցանցային օպերատոր դառնալու համար, այսինքն տեսալսողական մեդիածառայությունների հեղինակավորումը տրամադրվում է պարզեցված կարգով, հետևաբար առաջարկում ենք 3-րդ մասից հանել «տվյալներ օգտագործվելիք տեխնիկական միջոցների և սարքավորումների մասին, ֆինանսական աղբյուրները հիմնավորող փաստաթղթեր, տեղեկություններ աշխատակազմի թվաքանակի, նրանց կրթության և մասնագիտության մասին տեղեկություններ.» բառերը: Նույն տրամաբանությունից ելնելով անհրաժեշտ է Նախագծի 43-րդ հոդվածի 4-րդ մասից հանել «ներկայացվածի ուսումնասիրությամբ պարզվում է, որ հայտ ներկայացողը չունի համապատասխան միջոցներ սույն օրենքով նախատեսված պահանջների կատարումն ապահովելու համար, ինչպես նաև» բառերը:	Ընդունվել է
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Նախագծի 44-րդ հոդվածի 5-րդ մասում կառավարության ինչ լիազոր մարմնի մասին է խոսքը՝ հաշվի առնելով, որ տվյալ ոլորտում լիազոր մարմինը հենց կարգավորող պետական մարմինն է՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը:	Չի ընդունվել
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով լիցենզիան բնորոշվում է որպես կարգավորող	Ընդունվել է

		պետական մարմնի կողմից տեսալսողական մեդիածառայությանը տրամադրվող փաստաթուղթ, որը տալիս է հանրային մուլտիպլեքսում որոշակի տեսալսողական մեդիածառայության տեղեկատվության հեռարձակման նպատակով սլոթի օգտագործման իրավունք կամ ֆիզիկական կամ իրավաբանական անձին տեսալսողական տեղեկատվությունը տարածելու իրավունք: Նշված նորմի բովանդակությունից բխում է, որ լիզենզիա պահանջվում է հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման կամ տեսալսողական տեղեկատվություն տարածելու համար: Մինչդեռ Նախագծի 45-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է, որ լիցենզիան միակ օրինական հիմքն է, որը թույլ է տալիս **տեսալսողական մեդիածառայությանը տեսալսողական տեղեկատվության հեռարձակում իրականացնելու համար օգտվել սահմանափակ ռեսուրսից՝ հանրային մուլտիպլեքսի սլոթից, ֆիզիկական կամ իրավաբանական անձին իրականացնել մուլտիպլեքս օպերատորի գործունեություն**, իսկ **ցանցային օպերատորին՝ վերահեռարձակել Հայաստանի Հանրապետությունում գործող տեսալսողական մեդիածառայությունների և օտարերկրյա տեսալսողական մեդիածառայությունների տեսալսողական ծրագրերը**, բացառությամբ սույն օրենքով և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի: Այս կարգավորումից, իր հերթին, բխում է, որ լիզենզիա պահանջվում է նաև մուլտիպլեքս օպերատորի գործունեության, Հայաստանի Հանրապետությունում գործող տեսալսողական մեդիածառայությունների և օտարերկրյա տեսալսողական մեդիածառայությունների տեսալսողական ծրագրերի վերահեռարձակման համար: Այսինքն՝ Նախագծի իմաստով լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների շրջանակի առումով Նախագծի վկայակոչված երկու դրույթների միջև առկա է բովանդակային անհամապատասխանություն: Բացի	

		այդ, պարզաբանման կարիք ունի նաև «լիցենզիան միակ օրինական հիմքն է, որը թույլ է տալիս....օգտվել սահմանափակ ռեսուրսից՝ հանրային մուլտիպլեքսի սլոթից» ձևակերպումը:	
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Նախագծի 44-րդ հոդվածի 2-րդ կետը լրացնել «և միջպետական պայմանագրերի հիման վրա վերահեռարձակվող օտարերկրյա տեսալսողական ծառայությունները:» բառերով:	Ընդունվել է
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Նախագծի 45-րդ հոդվածը լրացնել նոր 6-րդ մասով հետևյալ բովանդակությամբ. «6. Առանց լիցենզիա Հայաստանի Հանրապետությունում տեսալսողական ծրագրերի հեռարձակում իրականացնում են հանրային տեսալսողական մեդիածառայությունները:»	Ընդունվել է
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Նախագծի 46-րդ հոդվածը լրացնել նոր 3-րդ մասով հետևյալ բովանդակությամբ. «3. Հայտին կցվում են այնպիսի փաստաթղթեր և հիմնավորումներ, որոնք սույն օրենքի 47-րդ հոդվածով սահմանված կարգով լիցենզավորված անձի ընտրության ժամանակ հաշվի է առնվելու:»	Ընդունվել է
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով հեռուստահաղորդումների կաբելային (մալուխային) հեռարձակման համար սահմանված տուրքի չափը ըստ սփռման տարածքի տարբեր է, հետևաբար առաջարկում ենք Նախագծի 48-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր 4-րդ կետով հետևյալ բովանդակությամբ. «4. Սփռման տարածքը»: Նախագծի 48-րդ հոդվածի 2-րդ մասում թվարկված են ցանցային օպերատորի լիցենզիա ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերը, որոնց կարիքը չկա, քանի որ ցանցային օպերատորի լիցենզիան տրամադրվում է պարզեցված կարգով, հետևաբար առաջարկում եմ 2-րդ մասից հանել «տվյալներ օգտագործվելիք տեխնիկական միջոցների և սարքավորումների մասին, ֆինանսական աղբյուրները հիմնավորող փաստաթղթեր,	Ընդունվել է

		տեղեկություններ աշխատակազմի թվաքանակի, նրանց կրթության և մասնագիտական պատրաստվածության մասին:» բառերը:	
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Նախագծի 50-րդ հոդվածի 1-ին մասում «տեղեկատվությունը տեսալսողական տեղեկատվություն տարածողի» բառերը փոխարինել «ծրագրերը ցանցային օպերատորի» բառերով:	Ընդունվել է
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Նախագծի 50-րդ հոդվածը լրացնել նոր 4-րդ մասով հետևյալ բովանդակությամբ. «4. Ցանցային օպերատորը սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետում նշված տեսալսողական տեղեկատվությունը իր ցանկում ներառելուց առաջ պարտավոր է ծանուցում ներկայացնել կարգավորող պետական մարմին:»	Ընդունվել է
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Նախագծի 52-րդ հոդվածի 1-ին մասում անհրաժեշտ է հստակեցնել պետական տուրք վճարելու պարտականություն ունեցող սուբյեկտին: Նույն հոդվածի 3-րդ մասով սահմանվում է, որ սահմանված ժամկետում պետական տուրքը չվճարելը հիմք է լիցենզիա տալու մասին և մրցույթում հաղթող ճանաչելու մասին որոշումներն **ուժը կորցրած ճանաչելու համար:** Մինչդեռ հոդվածի 4-րդ մասում նշվում է մրցույթում հաղթող ճանաչելու մասին որոշումը համապատասխան հիմքով **չեղյալ ճանաչվելու մասին**:	Ընդունվել է
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Նախագծի 51-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր 9-րդ կետով հետևյալ բովանդակությամբ. «9) կարգավորող պետական մարմնի կնիքի դրոշմը:»	Ընդունվել է
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Նախագծի 52-րդ հոդվածի 4-րդ մասում «չեղյալ» բառը փոխարինել «ուժը կորցրած» բառերով:	Ընդունվել է

ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Նախագծի 52-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ տեսալսողական մեդիածառայությունների լիցենզիաները տրվում են յոթ տարի, ցանցային օպերատորների լիցենզիան՝ տաս տարի ժամկետով՝ «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով լիցենզիայի ժամկետի երկարացման հնարավորությամբ, մուլտիպլեքս օպերատորի լիցենզիան՝ անժամկետ: Մինչդեռ հարկ է նկատի ունենալ, որ լիզենցավորման ենթակա են ոչ թե անձինք, մասնավորապես՝ տեսալսողական մեդիածառայությունները, ցանցային և մուլտիպլեքս օպերատորները, այլ վերջիններիս կողմից իրականացվող գործունեության տեսակները: Միաժամանակ, «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքին համապատասխանեցնելու նպատակով առաջարկում ենք «լիցենզիայի» բառից հետո լրացնել «գործողության» բառով», իսկ «երկարացման» բառը փոխարինել «երկարաձգման» բառով:	Ընդունվել է
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Նախագծի 53-րդ հոդվածի 1-ին մասում «տեսալսողական մեդիածառայության» բառերը փոխարինել «մուլտիպլեքս օպերատորի» բառերով, քանի որ այս հոդվածում խոսքը գնում է մուլտիպլեքս օպերատորի մասին:	Ընդունվել է
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Նախագծի 53-րդ հոդվածի 5-րդ մասում «ամսում» բառից հետո լրացնել «անվճար» բառը: Նախագծի 53-րդ հոդվածը լրացնել նոր 7-րդ մասով հետևյալ բովանդակությամբ. «7. Սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված մասնավոր մուլտիպլեքս օպերատորի կողմից իր մուլտիպլեքսի տեսալսողական տեղեկատվության 20 տոկոսը լիցենզավորված մեդիածառայություններին տրամադրելու դեպքում նրանց վրա տարածվում են հանրային մուլտիպլեքսի կարգավորումները:»	Ընդունվել է
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Նախագծի 54-րդ հոդվածի 1-ին մասից հանել «մինչ մրցույթում հաղթող ճանաչելը:» բառերը, իսկ	

		երկրորդ նախադասության «նոր մրցույթ» բառերից հետո լրացնել «այնքան ժամանակ մինչև մրցույթում հաղթող ճանաչվելը:» բառերը:	Ընդունվել է
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Նախագծի 54-րդ հոդվածի 3-րդ մասը լրացնել նոր 4-րդ կետով հետեւյալ բովանդակությամբ. «4.Դիմողի անվանումը և գտնվելու վայրը:»	Ընդունվել է
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Պարզաբանման կարիք ունի Նախագծի 55-րդ հոդվածի 1-ին մասում օգտագործվող «ցանցային կամ այլ ցանցերով հեռարձակում» ձևակերպումը: Առաջարկվում է կամ հստակեցնել կամ հանել «կամ այլ ցանցերով» բառերը: Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ կարգավորող պետական մարմնի՝ գործունեությունը թույլատրող որոշումը ստանալուց հետո, ոչ գծային տեսալսողական մեդիածառայությունները կարող են պայմանագրային հիմունքներով գործունեություն իրականացնել ցանցային օպերատորների և այլ հաղորդակցության ցանցերով: Մինչդեռ պարզ չէ՝ ոչ գծային տեսալսողական մեդիածառայությունները կարգավորող պետական մարմնի՝ գործունեությունը թույլատրող որոշումն ինչ ընթացակարգով են ստանալու:	Ընդունվել է
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի համաձայն՝ տեսալսողական մեդիածառայությունների դիստրիբյուտորը տեսալսողական մեդիածառայությունների տեսալսողական տեղեկատվության իրավատեր ֆիզիկական կամ իրավաբանական անձ է: Նախագծի՝ «Տեսալսողական տեղեկատվության դիստրիբյուտորի գործունեությունը և տարեկան հաշվետվությունը» վերտառությամբ 56-րդ հոդվածով կարգավորվում են վերջինիս գործունեության իրականացման հետ կապված հարաբերությունները:	Ընդունվել է

		Նշված հոդվածի բովանդակությունից, սակայն, պարզ չէ՝ ի վերջո ինչ է ենթադրում դիստրիբյուտորի գործունեությունը: Ավելին, Նախագծի նշված հոդվածում չկա որևէ կարգավորում դիստրիբյուտորի կողմից տարեկան հաշվետվություն ներկայացնելու վերաբերյալ: Առաջարկվում է հանել «և տարեկան հաշվետվությունը» բառերը, քանի որ այս հոդվածում հաշվետվության հետ կապված որևէ դրույթ սահմանված չէ, իսկ 56-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետում «իրավաբանական» բառից առաջ լրացնել «ծանուցում ներկայացնող» բառերը:	
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Նախագծի 57-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերում «գործունեության» բառից առաջ լրացնել «լիցենզիայի» բառը:	Ընդունվել է
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Նախագծի 59-րդ հոդվածի 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 14-րդ, 15-րդ, 16-րդ, 17-րդ, 20-րդ, 21-րդ, 22-րդ, 23-րդ, 24-րդ, 25-րդ, 26-րդ, 27-րդ մասերում սահմանված թվերից հետո լրացնել «տոկոսի» բառը:	Ընդունվել է
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Նախագծի 59-րդ հոդվածի 6-րդ մասում «հիսնապատիկ» բառից հետո լրացնել «չափով» բառը, 13-րդ մասը համապատասխանեցնել Նախագծի 20-րդ հոդվածի պահանջներին և «13. Լսողական մեդիածառայության կողմից եթերում օրական առնվազն երեք անգամ իր անվանումը չհայտարարելը» բառերը փոխարինել «13. Տեսալսողական մեդիածառայությունները ամեն օր եթերում իրենց ելքային տվյալները չներկայացնելը» բառերով:	Չի ընդունվել
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Քանի որ Նախագծի 59-րդ հոդվածով չեն նախատեսվել որոշակի իրավախախտումների տուգանքներ, ուստի առաջարկում ենք 59-րդ հոդվածը լրացնել նոր մասերով. • Լիցենզիա ստացած տեսալսողական	Ընդունվել է

		մեդիածառայության ծրագրերում մանկական, կրթական և մշակութային թեմատիկ ուղղվածության տեսալսողական հաղորդումների շաբաթական առնվազն 20 տոկոս չպահպանելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ ---- չափով, • Տեսալսողական նյութը ծխելու տեսարանների առկայության պարագայում մեկնարկին, տեսանելի չափով, 5 վայրկյան տևողությամբ «տեսանյութը պարունակում է ծխելու տեսարաններ» գրառմամբ չուղեկցելու դեպքում առաջացնում է տուգանքի նշանակում՝ ---- չափով, • Հանրային հեռարձակողի կողմից Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների կյանքի, մշակույթի, այդ թվում՝ իրենց լեզուների մասին տեսալսողական հաղորդումների հեռարձակման համար տրամադրվող եթերային ժամանակի նվազագույն ժամաքանակները չպահպանելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ ---- չափով, • Հանրային տեսալսողական մեդիածառայություններում տեղեկատվական, կրթական, մշակութային և ժամանցային բնույթի հաղորդումների վերաբերյա հաշվետվություն չներկայացնելը առաջացնում է տուգանքի նշանակում ----- չափով, • Կրթական, մշակութային և մանկական հաղորդումները տեսալսողական մեդիածառայություններին մեկ տարի հետո չտրամադրելը առաջացնում է	

		տուգանքի նշանակում՝ ---- չափով, • Հովանավորող տեսալսողական հաղորդման ընթացքում հովանավորողին համապատասխանող անվանումը կամ ցանկացած այլ խորհրդանիշ ոչ ավելի քան երեք անգամ յուրաքանչյուրը 15 վայրկյան տևողությամբ չներկայացնելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ ---- չափով:	
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Նախագծի 60-րդ հոդվածի 2-րդ մասում «կասեցնելուց հետո» բառերից հետո լրացնել «սակայն կասեցման ժամկետը չի կարող գերազանցել 60 օրը» բառերը:	Ընդունվել է
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Նախագծի 62-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ երկու մասերով. • Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի կողմից ձևավորված Մրցութային հանձնաժողովի կազմը լուծարել, • Հայաստանի Հանրապետությունում թվային ռադիոհեռարձակման անցման ժամանակ լիցենզավորված ռադիոընկերությունները պարտավոր են իրենց տեխնիկական միջոցները համապատասխանեցնել թվային հեռարձակման ցանցով հեռարձակվելու համար նախատեսված միջոցներին: Այս պայմանի ապահովման դեպքում լիցենզավորված ռադիոընկերությունները կգործեն	Ընդունվել է

		մինչև իրենց գործող լիցենզիայի ժամկետի ավարտը:	
ՀՀ ԱԺ իրավական փորձաքննության վարչություն	Նախագիծ	Նախագծի 1-ին հոդվածի 4-րդ մասի 4-րդ կետում մարմնի մասին առաջին հիշատակումը կատարելուց հետո փակագծերում նախատեսել նրա կրճատ տարբերակը՝ «տեսալսողական մեդիածառայության ոլորտը կարգավորող մարմնի (այսուհետ՝ Կարգավորող պետական մարմին) վրա.»՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ մասը: Հաշվի առնելով նշվածը՝ առաջարկում ենք նաև Նախագծի ողջ տեքստում Կարգավորող պետական մարմնի մասին նշում կատարելիս պահպանել կրճատ տարբերակի տեսքը:	Ընդունվել է
Հ ԱԺ իրավական փորձաքննության վարչություն	Նախագիծ	«Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածի 2-րդ մասում օրենքի կարգավորման առարկային վերաբերող կարգավորումը, այն է՝ «Սույն օրենքը սահմանում է տեսալսողական մեդիածառայությունների, տեսալսողական տեղեկատվություն տարածողների կարգավիճակը, կանոնակարգում է լիցենզավորման, թույլտվության տրամադրման, ծանուցումների ստացման կարգը, իրավունքների ու պարտականությունների առաջացման հիմքերը, գործունեության ընթացքում ծագող հարաբերությունները», առաջարկում ենք հստակեցնել՝ սահմանելով սուբյեկտներին, որոնց իրավունքների և պարտականությունների առաջացման հիմքերին և գործունեության ընթացքում ծագող հարաբերություններին վերաբերում են օրենքում առկա կարգավորումները:	Ընդունվել է
ՀՀ ԱԺ իրավական փորձաքննության վարչություն	Նախագիծ	Նախագծի 1-ին հոդվածի 4-րդ մասի 4-րդ և 5-րդ կետերում առկա է հետևյալ ձևակերպումը. «4. Սույն օրենքի գործողությունը տարածվում է՝ (…) 4) տեսալսողական մեդիածառայության ոլորտը կարգավորող մարմնի վրա. 5) հանրային տեսալսողական մեդիածառայության գործունեությունը **վերահսկող** մարմնի վրա.», մինչդեռ Նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում կիրառվում է «կառավարումն ապահովող և հսկողություն իրականացնող» ձևակերպումը, ինչպես նաև Նախագծի հանրային հեռարձակողի խորհրդին վերաբերող 23-րդ	Ընդունվել է

		հոդվածի 1-ին մասում առկա է հետևյալ կարգավորումը. «Հանրային հեռարձակողի կառավարումն ապահովող և հսկողություն իրականացնող մարմինը Խորհուրդն է»: Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասը՝ առաջարկում ենք միևնույն միտքն արտահայտելիս կիրառել միևնույն տերմինները:	
ՀԱԺ իրավական փորձաքննության վարչություն	Նախագիծ	• 15-րդ հոդվածի 2-րդ մասը՝ առաջարկում ենք Նախագծի 2-րդ հոդվածի վերնագրում և տեքստում կիրառել միևնույն տերմինը՝ փակագծերում նախատեսելով տերմինի մեկնաբանումը, օրինակ՝ «տեսալսողական մեդիայի (տեղեկատվության) մասին օրենսդրությունը», եթե Նախագծի հեղինակների նպատակն է «տեսալսողական մեդիա» և «տեսալսողական տեղեկատվություն» հասկացությունների նույնացումը:	Ընդունվել է
ՀՀ ԱԺ իրավական փորձաքննության վարչություն	Նախագիծ	Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասի տեքստում «Հայաստանի Հանրապետության օրենքները» բառերը փոխարինել «օրենքները» բառով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասը: Նույն հիմնավորմամբ առաջարկում ենք Նախագծի տեքստում առկա մյուս բոլոր օրենքների վերնագրերից հետո կիրառվող «Հայաստանի Հանրապետության» բառերը հանել:	Ընդունվել է
ՀԱԺ իրավական փորձաքննության վարչություն	Նախագիծ	Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասի ««Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքը» ձևակերպումն առաջարկում ենք փոխարինել «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրքը» ձևակերպումով՝ հիմք ընդունելով«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 4-րդ մասը.«Սահմանադրական օրենք հանդիսացող օրենսգրքի կրճատ անվանումը հիշատակելիս դրանում նշվում է օրենսգրքի վերնագիրը»: Նույն առաջարկը վերաբերելի է նաև Նախագծի տեսքստում կիրառվող ««Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենք»բոլոր ձևակերպումներին՝ իրենց հոլովաձևերով:	Ընդունվել է
ՀՀ ԱԺ իրավական փորձաքննության	Նախագիծ	Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի ենթակետերի հայերենի այբուբենի փոքրատառերով	

վարչություն		նշված համարները առաջարկում ենք տեքստից բաժանել միջակետերով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասը: Նույն առաջարկը վերաբերելի է նաև Նախագծի 22-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի ենթակետերի հայերենի այբուբենի փոքրատառերով նշված համարներին:	Ընդունվել է
ՀԱԺ իրավական փորձաքննության վարչություն	Նախագիծ	Նախագծի 7-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն. «1. Տեսալսողական մեդիածառայություններն ապահովում են. (…) 4) իրազեկումը՝ գաղտնի կամ հավաստիությունը բավականաչափ չստուգված աղբյուրների կողմից տրամադրված տեղեկության վերաբերյալ.»: Կարծում ենք, «բավականաչափ չստուգված» ձևակերպումն ունի որոշակիացման և հստակեցման կարիք՝ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ իրազեկման պարտականությունը չկատարելը տեսալսողական մեդիածառայության համար կարող է առաջացնել օրենքով նախատեսված պատասխանատվություն՝ տուգանքի նշանակում: Այսինքն՝ պատասխանատու անձանց համար պետք է հստակ և հասկանալի լինի, թե որ դեպքերում իրենք կարող են համարել տեղեկատվության հավաստիությունը բավականաչափ ստուգված, որ դեպքերում՝ ոչ բավականաչափ:	Ընդունվել է
ՀՀ ԱԺ իրավական փորձաքննության վարչություն	Նախագիծ	Կարծում ենք, «կշռադատվածությունը» եզրույթն ունի որոշակիացման և հստակեցման կարիք՝ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, նախատեսված պահանջը չկատարելը տեսալսողական մեդիածառայության համար կարող է առաջացնել օրենքով նախատեսված պատասխանատվություն՝ տուգանքի նշանակում: Միաժամանակ՝ առաջարկում ենք նաև հստակեցնել Նախագծի 7-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի «տեսակետի բացակայությունը» ձևակերպումը՝ հստակ նշում կատարելով այն մասին, որ խոսքը կարծիքը հայտնած անձի հաղորդմանը մասնակցելուց հրաժարվելու կամ տեսակետը հայտնելուց հրաժարվելու իրավիճակների մասին է:	Ընդունվել է
ՀԱԺ իրավական փորձաքննության	Նախագիծ	Նախագծի 7-րդ հոդվածի 5-րդ մասի կարգավորումն ունի խմբագրման կարիք, քանի որ կարգավորման դաշտից դուրս են մնացել լսողական հաղորդումները:	

վարչություն			Ընդունվել է
ՀՀ ԱԺ իրավական փորձաքննության վարչություն	Նախագիծ	Նախագծի 8-րդ հոդվածում կիրառվում են «կարևոր իրադարձություն» և «բացառիկ իրադարձություն» եզրույթները, որոնք կարծում ենք, հստակեցման կարիք ունեն: Կարծում ենք, նպատակահարմար է օրենսդրությամբ նախատեսել որոշակի չափանիշներ, որոնք հնարավորություն կտան իրադարձությունը որակելու որպես կարևոր իրադարձություն, և որոնցով պետք է առաջնորդվի Կարգավորող պետական մարմինը դրանց շրջանակը նախատեսելիս: Նախագծի 8-րդ հոդվածի 10-րդ մասում կիրառվում է «բացառիկ իրադարձություն» ձևակերպումը, կարծում ենք պետք է հստակեցվի եզրույթը, կամ փոխարինվի «կարևոր իրադարձություն» եզրույթով, եթե օգտագործվում է որպես վերջինիս հոմանիշ ձևակերպում:	Ընդունվել է
Հ ԱԺ իրավական փորձաքննության վարչություն	Նախագիծ	Նախագծի 10-րդ հոդվածի 6-րդ մասը նախատեսում է հետևյալ կարգավորումը.«6. Լիցենզիա ստացած տեսալսողական մեդիածառայության ծրագրերում մանկական, կրթական և մշակութային թեմատիկ ուղղվածության տեսալսողական հաղորդումները պետք է կազմեն շաբաթական <u>ընդհանուրն</u> առնվազն 20 տոկոս»: Առաջարկում ենք Նախագծի 10-րդ հոդվածի 6-րդ մասում «շաբաթական ընդհանուրն առնվազն 20 տոկոս» ձևակերպման մեջ առկա վրիպակն ուղղել՝ միաժամանակ խմբագրելով կարգավորումը:	Ընդունվել է
ՀՀ ԱԺ իրավական փորձաքննության վարչություն	Նախագիծ	Նախագծի 3-րդ գլուխը վերնագրված է «Տեսալսողական հաղորդումների կազմակերպումը», մինչդեռ այն ներառում է «Տեսալսողական մեդիածառայությունները ռազմական կամ արտակարգ դրություն հայտարարելու ժամանակ» վերնագրված 12-րդ հոդվածը, որի կարգավորումները վերաբերում են ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ եթերաժամանակի հատկացմանը: Կարծում ենք, հոդվածի վերնագիրը և Նախագծի 3-րդ գլխում դրա նախատեսումը ունեն վերանայման կարիք՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ և 10-րդ մասերը:	Ընդունվել է

Հ ԱԺ իրավական փորձաքննության վարչություն	Նախագիծ	Նախագծի 13-րդ հոդվածում, կարծում ենք, պետք է հստակ նշում կատարվի տեսալսողական մեդիածառայությունների կողմից տեսալսողական հաղորդումների հաշվառման մատյան վարելու պարտականության մասին, հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ հաշվառման մատյանի վարման սահմանված կարգը խախտելու համար Նախագծով նախատեսվում է պատասխանատվություն:	Ընդունվել է
ՀՀ ԱԺ իրավական փորձաքննության վարչություն	Նախագիծ	• Նախագծի 16-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետում կիրառվում է «բարձրաստիճան պաշտոնատար անձ» հասկացությունը, սակայն հարկ է նկատել, որ «Հանրային ծառայության մասին» 2018 թվականի մարտի 23-ի ՀՕ-206-Ն օրենքը չի պարունակում «բարձրաստիճան պաշտոնատար անձ» հասկացության սահմանումը, ուստի, հիմք ընդունելով նշվածը, առաջարկում ենք հստակեցնել ձևակերպումը:	Ընդունվել է
Հ ԱԺ իրավական փորձաքննության վարչություն	Նախագիծ	Նախագծի 19-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Տեսալսողական մեդիածառայությունները և տեսալսողական տեղեկատվություն տարածողները պարտավոր են յուրաքանչյուր տարվա մինչև հունվարի 20-ը կարգավորող պետական մարմին ներկայացնել նախորդ տարվա հասույթի (այսուհետ՝ Հասույթ) չափի վերաբերյալ տեղեկատվություն»: Նշվածի կապակցությամբ հարկ է նկատել, որ «հասույթ» եզրույթը հաշվապահական հաշվառման տեսանկյունից ունի լայն մեկնաբանված և հաշվապահական մոտեցումների կիրառմամբ հաշվարկման և ներկայացման մասնագիտական առանձնահատկություններ, մասնավորապես՝ հաշվապահական հաշվառման ստանդարտների մեջ ներդրված է «ՀՀՀՀՀՍ 18 «Հասույթ» ստանդարտը, որի կապակցությամբ հաստատված են Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման ստանդարտների համառոտ ուղեցույցները, այդ թվում ՝ ՀՀՀՀՀՍ18 «Հասույթ» ստանդարտինը: Ելնելով նշվածից և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Նախագծի 59-րդ հոդվածով տուգանքների նշանակման (հաշվարկման) չափի հիմքում հիմնականում դրված է «Հասույթ» նկատմամբ որոշակի տոկոսների կիրառումը, ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով՝ առաջարկում ենք Նախագծում նախատեսել օրենքում օգտագործվող «Հասույթ» եզրույթի սահմանումը:	Ընդունվել է

ՀՀ ԱԺ իրավական փորձաքննության վարչություն	Նախագիծ	Նախագծի 25-րդ հոդվածի 4-րդ մասում առկա է հետևյալ կարգավորումը. «Մրցութային հանձնաժողովի անդամների ձևավորման կարգը սահմանում է կառավարությունը», առաջարկում ենք հստակեցնել քննարկվող կարգավորումը՝ նշելով «Մրցութային հանձնաժողովի անդամների ընտրության կարգը» կամ «Մրցութային հանձնաժողովի ձևավորման կարգը»: Բացի այդ, առաջարկում ենք Նախագծի 25-րդ հոդվածի 1-ին մասում ժամանակավոր մրցույթային հանձնաժողովի մասին առաջին հիշատակումը կատարելուց հետո փակագծերում նախատեսել նրա կրճատ տարբերակը՝ «(այսուհետ՝ Մրցույթային հանձնաժողով)»՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ մասը: Հաշվի առնելով նշվածը՝ առաջարկում ենք նաև Նախագծի ողջ տեքստում Մրցույթային հանձնաժողովի մասին նշում կատարելիս պահպանել կրճատ տարբերակի տեսքը: Միաժամանակ առաջարկում ենք Նախագծի ողջ տեքստում «կառավարությունը» բառը՝ իր բոլոր հոլովաձևերով, փոխարինել «Կառավարությունը» բառով՝ իր բոլոր հոլովաձևերով՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ նախատեսված կարգավորումները և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը:	Ընդունվել է
Հ ԱԺ իրավական փորձաքննության վարչություն	Նախագիծ	Նախագծի 32-րդ հովածի 1-ին մասի 18-րդ կետում նախատեսվում է Կարգավորող պետական մարմնի՝ Խորհրդի կողմից ներկայացվող <u>հաշվետվության</u> ներկայացման կարգը և ձևը սահմանելու լիազորությունը: Հաշվետվությանը արվող հղումը հստակեցնելու նպատակով՝ առաջարկում ենք Նախագծի 32-րդ հովածի 1-ին մասի 18-րդ կետում հղում կատարել Նախագծի 27-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետին՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասը:	Ընդունվել է
ՀՀ ԱԺ իրավական փորձաքննության վարչություն	Նախագիծ	Նախագծի 32-րդ հոդվածի 7-րդ մասում առաջարկում ենք «հրապարակվում են» բառերից հետո լրացնել «նաև» բառը՝ հաշվի առնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 25-րդ հոդվածի կարգավորումները:	Ընդունվել է

ՀԱԺ իրավական փորձաքննության վարչություն	Նախագիծ	Նախագծի 33-րդ հոդվածում արված վրիպակն առաջարկում ենք ուղղել՝ հանելով մասերի համարակալումը, քանի որ 2-րդ մասում բացակայում է մասի բովանդակությունը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասը:	Ընդունվել է
ՀՀ ԱԺ իրավական փորձաքննության վարչություն	Նախագիծ	Նախագծի 35-րդ հոդվածի 3-րդ մասում ««Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենք» ձևակերպումից առաջարկում ենք հանել «Հայաստանի Հանրապետության» բառերն՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասը՝ «Սահմանադրական օրենքի կրճատ անվանումը հիշատակելիս դրանում հետևյալ հաջորդականությամբ ներառվում են սահմանադրական օրենքի վերնագիրը, «սահմանադրական օրենք» բառերը»: Նույն առաջարկը վերաբերելի է նաև Նախագծի 39-րդ հոդվածի 4-րդ մասում ««Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենք» ձևակերպմանը:	Ընդունվել է
ՀԱԺ իրավական փորձաքննության վարչություն	Նախագիծ	Նախագծի 42-րդ հոդվածի 1-ին մասում նախատեսվում է հետևյալ կարգավորումը. «1. Տեսալսողական մեդիածառայությունների գործունեության մշտադիտարկումն իրականացվում է <u>ուղղակի դիտարկման</u>, իսկ ցանցային օպերատորի դեպքում նաև տեղում դիտարկում իրականացնելու միջոցով: <u>Ուղղակի դիտարկման</u> արդյունքները կարող են համադրվել տեսալսողական մեդիածառայությունների ներկայացրած հաշվառման մատյանների տվյալների հետ»: Հարկ է նկատել, որ Նախագծի՝ օրենքում օգտագործվող հիմնական հասկացություններին վերաբերող 3-րդ հոդվածում սահմանված չէ «ուղղակի դիրտարկում» հասկացությունը: Կարծում ենք, նպատակահարմար է Նախագծի 3-րդ հոդվածում ներառել նաև «ուղղակի դիրտարկում» հասկացության սահմանումը:	Չի ընդունվել
ՀՀ ԱԺ իրավական փորձաքննության վարչություն	Նախագիծ	Նախագծի 42-րդ հոդվածի 3-րդ մասում նշում է կատարվում այն մասին, որ <u>ցանցային օպերատորի</u> գործունեության մշտադիտարկումն իրականացվում է Կարգավորող պետական մարմնի նախագահի հրամանի հիման վրա: Նախագծի 42-րդ հոդվածում հրամանի բովանդակությանը վերաբերող 4-րդ մասում նշում է կատարվում այն մասին, որ հրամանը պետք է	Ընդունվել է

		պարունակի տեսալսողական մեդիածառայության լրիվ անվանումը և գտնվելու վայրը: Կարծում ենք, որ կարգավորումը և կիրառվող եզրույթները պետք է հստակեցվեն՝ հստակ նշում կատարելով այն մասին, թե որ դեպքերում է մշտադիտարկումն իրականացվում Կարգավորող պետական մարմնի նախագահի հրամանի հիման վրա, ինչպես նաև որ սուբյեկտի անվանումն է ներառվում հրամանում՝ տեսալսողական մեդիածառայության, թե տեսալսողական տեղեկատվություն տարածողի: Նշված առաջարկը հիմնավորվում է նաև Նախագծի 42-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերում առկա կարգավորումներով.	
ՀԱԺ իրավական փորձաքննության վարչություն	Նախագիծ	Մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ արձանագրությունը տեսալսողական մեդիածառայության ղեկավարին փոխարինելու իրավունք ունեցող անձի կողմից ստորագրվելու դեպքում դրա մասին համապատասխան նշում է կատարվում արձանագրության մեջ, և արձանագրությանը կցվում է այն իրավական փաստաթղթի պատճենը (կանոնադրություն, հրաման, որոշում, լիազորագիր կամ այլ փաստաթուղթ), որի հիման վրա տվյալ անձն իրավունք ունի փոխարինելու տեսալսողական մեդիածառայության կամ տեսալսողական տեղեկատվություն տարածողի ղեկավարին»:	Ընդունվել է
ՀՀ ԱԺ իրավական փորձաքննության վարչություն	Նախագիծ	Նախագծի 42-րդ հոդվածում կիրառվում են «Կարգավորող պետական մարմնի աշխատակից» և «Կարգավորող պետական մարմնի ներկայացուցիչ» հասկացությունները, առաջարկում ենք միևնույն միտքն արտահայտելիս կիրառել միևնույն բառերը՝ որոշակի հերթականությամբ՝ հիմք ընդունելովՆորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասը:	Ընդունվել է
ՀԱԺ իրավական փորձաքննության վարչություն	Նախագիծ	Նախագծի 43-րդ հոդվածի 2-րդ մասում առաջարկում ենք «Հայտում» բառը փոխարինել «Հեղինակազորում ստանալու հայտում» բառերով կամ «Սույն հոդվածի 1-ին մասում նշված հայտում» բառերով, քանի որ նշված մասով հայտի ներկայացման նպատակը հեղինակազորում ստանալն է, բացի այդ Նախագծի 46-րդ հոդվածի համաձայն՝ հայտ է ներկայացվում նաև տեսալսողական մեդիածառայությունների լիցենզավորման մրցույթի մասնակցության համար: Առաջարկը վերաբերելի է նաև նույն հոդվածի 3-րդ մասում նշված «Հայտին» բառին և 4-րդ մասում նշված «հայտը» բառին:	Ընդունվել է
ՀՀ ԱԺ իրավական	Նախագիծ	Նախագծի 44-րդ հոդվածի 7-րդ մասում առաջարկում	

փորձաքննության վարչություն		ենք «լիցենզիոն» բառը փոխարինել «լիցենզիայի» բառով՝ Նախագծով և «Լիցենզավորման մասին» օրենքով սահմանված ձևակերպումներին համապատասխանեցնելու համար:	Ընդունվել է
ՀԱԺ իրավական փորձաքննության վարչություն	Նախագիծ	Նախագծի 46-րդ հոդվածում կիրառվում են «սեփական տեսալսողական հաղորդումներ» և «հայրենական տեսալսողական հաղորդումներ» հասկացությունները, մինչդեռ Նախագծի օրենքում օգտագործվող հիմնական հասկացություններին վերաբերող 3-րդ հոդվածում դրանք սահմանված չեն: Կարծում ենք, նպատակահարմար է Նախագծի 3-րդ հոդվածում ներառել նաև «սեփական տեսալսողական հաղորդումներ» և «հայրենական տեսալսողական հաղորդումներ» հասկացությունների սահմանումները: Միաժամանակ առաջարկում ենք Նախագծի 46-րդ հոդվածի 1-ին մասի կետերի համարակալումը կատարելիս պահպանել համարների հաջորդականությունը:	Չի ընդունվել
ՀՀ ԱԺ իրավական փորձաքննության վարչություն	Նախագիծ	Նախագծի 49-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետում առաջարկում ենք թերությունների մասին նշում կատարելիս հղում անել Նախագծի 48-րդ հոդվածի 3-րդ մասին՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասը:	Ընդունվել է
ՀԱԺ իրավական փորձաքննության վարչություն	Նախագիծ	Նախագծի 49-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետում «տեսալսողական տեղեկատվածության հեռարձակման» ձևակերպումը խմբագրել՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Նախագծի ցանցային օպերատորի վերաբերյալ կարգավորումներում կիրառվում են «տեսալսողական տեղեկատվության տարածում» և «տեսալսողական տեղեկատվության վերահեռարձակում» ձևակերպումները (օրինակ՝ Նախագծի 50-րդ հոդվածը) և հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասը:	Ընդունվել է
ՀՀ ԱԺ իրավական փորձաքննության վարչություն	Նախագիծ	Նախագծի մասնավոր մուլտիպլեքս օպերատորի լիցենզավորմանը վերաբերող 8-րդ գլխում ներառված է «Ընդհանուր դրույթներ մասնավոր մուլտիպլեքս օպերատորի վերաբերյալ» վերտառությամբ 53-րդ հոդվածը, կարծում ենք հոդվածի վերնագիրը և տեքստը	Ընդունվել է

		ունեն խմբագրման կարիք՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ և 10-րդ մասերը: Միաժամանակ առաջարկում ենք խմբագրել Նախագծի 53-րդ հոդվածի 1-ին մասի «տեսալսողական մեդիածառայությունների որոշումների» ձևակերպումը.	
Հ ԱԺ իրավական փորձաքննության վարչություն	Նախագիծ	Նախագծի 53-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված է. «Մասնավոր մուլտիպլեքս օպերատորի գործունեությունն իրականացվում է օրենքով սահմանված կարգով կարգավորող պետական մարմնի տված լիցենզիայի հիման վրա **Հայաստանի Հանրապետությունում հիմնադրված իրավաբանական կամ ֆիզիկական անձի կողմից, որի հիմնադրման (ստեղծման) ժամանակ** կամ դրանից հետո օտարերկրյա կապիտալի մասնակցության բաժինը չպետք է հավասար կամ ավելի լինի տեսալսողական մեդիածառայության որոշումների ընդունման համար անհրաժեշտ բաժնեմասերի 50 տոկոսից: Ավելի մեծ բաժնեմաս կարող է սահմանվել միջպետական պայմանագրերով», մինչդեռ հասկանալի չէ «**Հայաստանի Հանրապետությունում հիմնադրված ֆիզիկական անձի կողմից**» ձևակերպումը: Նշենք, որ անհասկանալի ձևակերպմամբ շարադրված է նաև Նախագծի 54-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին նախադասությունը, մասնավորապես՝ «Կարգավորող պետական մարմինը հայտարարում է մասնավոր մուլտիպլեքս օպերատորի գործունեության լիցենզիա ստանալու մրցույթ, **մինչ մրցույթում հաղթող ճանաչելը**»՝ հաշվի առնելով, որ մրցույթը հայտարարվում է մրցույթում հաղթող ճանաչելու նպատակով:	Ընդունվել է
ՀՀ ԱԺ իրավական փորձաքննության վարչություն	Նախագիծ	Նախագծի 54-րդ հոդվածի մասերի համարակալումը կատարելիս առաջարկում ենք պահպանել համարների հաջորդականությունը: Նախագծի 54-րդ հոդվածի 7-րդ մասում առաջարկում ենք «փորձագիտական եզրակացությունը» բառերը փոխարինել «փորձաքննության արդյունքերը» բառերով:	Ընդունվել է
Հ ԱԺ իրավական փորձաքննության վարչություն	Նախագիծ	Նախագծի 55-րդ հոդվածի մասերը համարակալելիս առաջարկում ենք պահպանել համարների հաջորդականությունը:	Ընդունվել է

ՀՀ ԱԺ իրավական փորձաքննության վարչություն	Նախագիծ	Նախագծի 56-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետում «իրավաբանական» բառից հետո լրացնել «կամ ֆիզիկական» բառերը՝ հաշվի առնելով, որ Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետը, այն է՝ «տեսալսողական մեդիածառայությունների դիստրիբյուտոր՝ տեսալսողական մեդիածառայությունների տեսալսողական տեղեկատվության իրավատեր **ֆիզիկական** կամ իրավաբանական անձ.»:	Ընդունվել է